

ՅՈՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ՅՈՐՐՈՐԴ ՄՇԱԿԱԿԱՆ

ԿԱՆԱՆՁ ՀԱՍԿԵՐ

Կանանչ հասկերն են դաշտիս, արեւին մէջ կը ծրփան.
Էւ ինչ առատ են ժայթքեր իրենց կեանքով արփական:

Կը ծածկեն հողը բոլոր. արտավարէ արտավար՝
Մինչեւ աղբիւրը գիւղին կ'երթայ ծովակը դալար:

Էւ լուսեղ օդն է լեցուն անոնց մեղմիկ մրմունջէն
Ուր զեփիւռի շրթունքներ աշնան տարփոտ կը մնջեն...

Ո՛ր ոչ ալօս կ'երեւի, ո՛չ ալ այն քարն ըսպիտակ
Որ սահմանն էր դաշտերուն, բարտինքու շուքին տակ:

Բուռ մը ցորենը զոգցես դարձեր է բո՛յլ աստղերու.
Աստղի մը սերմն է արդէն ցորենը սուրբ և աղու...

Մըշակ, եզիդ եղջիւրները պըսակէ՛ հասկերով,
Երբ գիւղ դառնաս իրիկունն աստեղաջեր ըստուերով...

*
* *

Կանանչ, կանանչ ալիքներ լուսածրփուն վէտիվէտ,
Կը խոնարհին հովին տակ՝ միօրինակ և անհետ:

Ու վերըստին բարձրացած՝ արեգակէն կ'ողողուն
Իրենց կաթոջն արփաջեր՝ բոցերու մէջ երկնային...

Ծաղկեր ծաղկեր են հիմա բուռ բուռ, ասղին և անդին,
Կարմիր կարմիր կակաչներ որ լուսարծարծ կը բուռնկին:

Հոն՝ ուր ցորենն իր անթիւ սերմհատիկով կը ծըլի,
Միշտ անրաժան է եղբւր բոսոր ծաղիկն այդ վայրի:

Երբ կ'անցնի սիւքն, անանց վառ շափրակներէն համբուրուած՝
Կանանչ հասկերը կ'ըլլան աւելի շուտ հասունցած...

Երբոր արեւն իր լոյսով յետին աստղերը մարէ,
Մըշակ, եզիդ եղջիւրները կակաչով զարդարէ...

*
* *

Հասկ ու ծաղիկ է ծովակն ահա՛ ծրփուն արեւուտ,
Եւ նըշենին է ծաղկեր իր վարդերով խնկահոտ:

Ի զուր չեղան քրտիքներն իմ ճակատին ու լծկան
Թաղթ եզներուն՝ որ երկաթ արօրներու լծուեցան:

Հողն իր գանձով աուլըցուն բացաւ լայն ծոցը յուրթի,
Ուրկէ լոյսին պէս առատ՝ կենսաղբիւրն այս կը ցայտի:

Երկիրն իր տաճը ըստինքներն արհեստով բեղմնւած՝
Ամէն սերմի կը պարպէ, ամէն ծիլի մը ծաղկած...

Ու միշտ՝ երբոր հասկաթուռ ըլլայ ցորենն ոսկեղէն,
Արեւին սիրտն անըսպառ կը մանգաղուի դաշտերէն...

Մըշակ, երբ դուն ողջունես աղօթարանը վրճիտ,
Նըշնիրով պըսակէ՛ մեծ եղջիւրները եզիդ...

*
* *

Թոյլ տո՛ւր որ եզդ արածի ցորեններով ծըլարձակ.
Այստոյտն անա՛ կ'երգէ վերը՝ կապտածոր շողին տակ:

Ա՛լ դուն հանգչէ՛, քրտինքիդ աղն է չորցեր ճակտիդ վրայ,
Հոգիիդ մէջ առաւօտն իր յոյսերով կը լուսնայ...

Աչքերդ արգէն կը ժպտին երբ կը ծըռիս քաղելու
Առաջին հասկը խարտեաշ ծոցը դալար հասկերու:—

Օրհներգութիւն վաստակիդ՝ որուն տաժանքը տարիւր
Անխոնջօրէն, ու սրտի նըւիրումով լիալիր:

Եւ հողն հիմա կ'արձակէ անհուն ծիլեր անծանօթ՝
Հոգիիդ մէջ ուր լուսցաւ Գեղեցկութեան առաւօտ...

Մըշակ, գիւղի տաճարին երբոր երթաս աղօթքի,
Աստուածամօր ընծայ տա՛ր առաջին հասկը ոսկի...:

ԱՐՄԷՆ-ԷՐԿԱՅ

